ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 396-Ա 06 հուլիսի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԵՐԵՄ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ին մասերի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 9-րդ մասի, 60-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության հանրապետական զինվորական կոմիսարիատի Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար գնդապետ Արմեն Մնացականյանի ծանուցագիրը և Երեմ Քարամյանի 2026 թվականի հուլիսի 6-ի Ն/2377-2026 զեկուցագիրը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Երեմ Քարամյանին՝ 2026 թվականի հուլիսի 7-ից մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը ներառյալ, ժամանակավորապես ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ քսանհինգօրյա վարժական հավաքներին մասնակցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

3. Երեմ Քարամյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 3-ից:

06.07.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108400503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ